

Արձանագրություն

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2023-թ. մայիսի 2-ի թիվ 9- նիստից Օրակարգը՝

- 1.Ֆակուլտետի ՈւԽ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների վերաբերյալ:
- 2.Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2022-23 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
- 3.Ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունքների քննարկում:
- 4.Ընթացիկ հարցեր

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան – Հարգելի գործընկերներ գիտխորհրդի 16 անդամներից ներկա են 15 –ը, քվորում ունենք հետևաբար կարող ենք անցնել մեր աշխատանքին: Օրակարգին բոլորդ ծանոթ եք. առաջարկություններ կամ փոփոխություններ օրակարգում ունե՞ք:

Գիտխորհրդի քարտուղար Մ. Ա. Սամվելյան- Խնդրում եմ օրակարգում՝ ընդգրկենք ավարտական աշխատանքների վերնագրերի փոփոխության հարցը: Որով ավարտական աշխատանքների վերնագրերի ճշգրտված տարբերակներ ներկայացրել են <ֆիզիկական և կոլոիդ քիմիա> և <օրգանական քիմիա> ամբիոնների վարիչները:

Օրակարգը հաստատվեց վերոհիշյալ փոփոխությամբ:

Նիստի նախագահ Տ. Վ. Ղուչիկյան -Անցնենք օրակարգի առաջին հարցին: Լսում ենք ՈւԽ նախագահ Ա. Նիգարյանի հաղորդումը 2022-2023 ուս տարվա կատարած աշխատանքների մասին: (Ա. Նիգարյանի հաշվետվությունը կցվում է ամբողջությամբ)

Ելույթ ունեցողին հարցեր ուղղեցին

Ն. Ա. Դուրգարյան - Այստարի ունենք թարմացված ՈւԽ կազմ: Ինչ՞ չափորոշիչներով եք իրականացրել անդամների ընտրությունը :

Ա. Նիգարյան – Թեկան ծուխ ընտրությունը իրականացվել է կուրսերում քվեարկության արդյունքովներով :

Ա. Մարտիրոսյան – Իրականացրել էք մի շարք հանդիպումներ . ի՞նչ բնույթի էին դրանք գիտական , թե կրթական :

Ա. Նիգարյան - Կլոր սեղան ֆորմատով իրականացված հանդիպումները հիմնականում գիտական էին և բավականին հետաքրքիր : Օրինակ նման բնույթ էր կրում էլոկոգիկան խնդիրներին վերաբերվող «կլոր սեղան » հանդիպումը :

Ռ. Պ. Մխիթարյան – Ուիս-ին արդյոք դիմել են ուսանողներ , ովքեր խնդիրներ ունեն վարձավճարի հետ :

Ա. Նիգարյան – Մեզ նման խնդրով չեն մոտեցել , սակայն եթե մոտենան կաշխատենք հնարավորինս լուծում գտնել :

Պրոֆեսոր Տ. Վ. Ղուշիկյան – Ըստ օրակարգի . այժմ լսում են օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ն. Ա. Դուրգարյանի հաշվետվությունը կատարված աշխատանքներին մասին :

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ն. Ա. Դուրգարյան (հաշվետվությունը հակիրճ ներկայացվում է)

Պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան – Օրգանական քիմիայի ամբիոնը սպասարկում է քիմիայի ֆակուլտետի «Քիմիա» , «Մենդիան վտանգոթյուն» բաժիններին , Ֆարմացիայի ինստիտուտի բակալավրիատի բաժնին և կենսաբանության ֆակուլտետին : Ամբիոնում կատարվել են 15 ավարտական և 4 մագիստրոսական աշխատանքներ : Ավարտական աշխատանքները հիմնականում ավարտված են մայիսի 19-ին տեղի կունենա նախնական պաշտպանություն , իսկ մագիստրոսական աշխատանքներին կատարման որակը և ուսանողների պատրաստվածությունն աստիճանը արտացոլվում է բարձր գնահատականներով :

Լաբորատոր աշխատանքներին մասնով փորձերը թարմացվում են ըստ ծրագրի : Քիմիա և Մենդիան վտանգոթյուն բաժնի ուսանողները աշխատանքները կատարում են զույգերով , սակայն ֆարմացիայի և կենսաբանության ֆակուլտետի ուսանողներին հետ աշխատանքները կատարվում են խմբերով : Հաշվետու տարում ամբիոնում հրատարակվել է 14 հոդված ,

որոնցից 12 բարձր իմպակտ ֆակտորներով ամսագրերում, 2 –ը տեղական ամսագրերում, 2 ՀՀ արտոնագիր, 7 միջազգային թեզիս : Այս տարի ամբիոնի կողմից պոլիմերների գծով կազմակերպել էինք միջազգային կոնֆերանս ԵՊՀ-ում, որը առաջինն էր իր ֆորմատով ԵՊՀ - ում և բավականին լավ արձագանք է ստացել : Ամբիոնում իրականացվում է 5 դրամաշնորհ, որոնցից 1 ANSEF, 2 միջազգային և 2- տեղական : Ամբիոնը միարժամանակ ընդունել է դարոցականներին : Հանդիպման ժամանակն իրականացվել է տեսակական և փորձնական քննարկումներ :

Ռ.Պ. Մխիթարյան – Դուրս ամբողջությամբ էք փոխել լաբորատոր դասերի փորձերի շարքը :

Ն.Ա.Դուրգարյան – Մենք թարմացրել և ավելացրել ենք փորձերի շարքը՝ պահպանելով դասական փորձերը . այն է յուրաքանչյուր դասի որակական ռեակցիաները, հայտնաբերման մեթոդները : Լաբորատոր աշխատանքների հիմքը կայանում է նրանում, որ ուսանողը անգամ բակալավրիատը ավարտելուց հետո ունենա բարձր փորձարարական հմտություններ և կարողանա աշխատի լաբորատորիայում :

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը հաստատեց և դրական գնահատեց Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ :

Տ. Վ. Ղուչիկյան - Գիտական խորհրդին են դիմել օրգանական և ֆիզ. և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչները ավարտական աշխատանքների վերնագրերի փոփոխման հարցով : Ավարտական աշխատանքների վերնագրերի փոփոխությունը պայմանավորված է աշխատանքի ընթացքով : Ամբիոններում լուվել և հաստատվել է : Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնում վերնագրերի փոփոխման հարց չկա՝

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ
Ս. Մարտիրոսյան Մեր ամբիոնում վերնագրերի փոփոխություններ
չեն եղել :

ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատեց վերնագրերի
փոփոխությունը: Որոշեց փոփոխված վերնագրերի վերաբերյալ
քաղվածքը ներկայացնել բակալավրիատի բաժին:

1 Ընթացիկ հարցեր

Տ. Վ. Ղոչիկյան – Գիտխորհրդի քարտուղարը Ձեր քննարկմանն է
ուղարկել բակալավրիատի ծրագրի օրինակելի տարբերակը:
Փոփոխություններին հետևողապես հարցերը կներկայացնի
բակալավրիատի ծրագրի ղեկավար Լ. Ս. Գաբրիելյանը

Լ. Գաբրիելյան – ծրագրում կատարված փոփոխությունները
ազդում են լսաբանային ժամերի վրա, սակայն կրեդիտներին
քանակությունը մնացել է նույնը: Այստեղ ավելացել է
ուսանողներին ինքնուրույն աշխատանքների ժամերը:

Գիտական խորհրդի անդամները նշեցին, որ նման
փոփոխությունները հնարավոր են հումանիտար հոսքերի
ծրագրերում: Քիմիայի ծրագրերում նման փոփոխությունները
կտրուկ կազդեն ուսուցման որակի վրա՝ որը հակասում է ԵՊՀ-ի
կողմից որդեգրված ռազմավարությունը՝ պատրաստի մասնագետ,
հմուտ փորձարար:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց՝ ղիմել ԵՊՀ
գիտական խորհրդին, և ցույց տալ բակալավրիատի ծրագրում
կատարվող փոփոխությունների բացասական հետևանքները:

Գիտխորհուրդի նախագահ
պրոֆեսոր

Տ. Վ. Ղոչիկյան

Գիտխորհրդի քարտուղար
դոցենտ

Մ. Ա. Սամվելյան

